Ռեյ Բրեդբերի

Ջրանցույցը

Քարե հսկա կամարները բազմել էին ամբողջ երկրով մեկ: Ամբարն առայժմ չոր ու ցամաք էր, ջրատարների մեջ քամի էր խաղում: Մի կլոր տարի պահանջվեց, որ Ջրանցույց կառուցեն, ու ջուրը Հյուսիսի երկրից հասցնեն Հարավի երկիր:
– Շուտով,- ասում էին մայրերը երեխաներին,- շատ շուտով Ջրանցույցի կառուցումը կավարտվի, և Հյուսիսում՝ հազարավոր մղոններ հեռվում, սահմանադուռը կբացեն, ու պաղ ջուր կհոսի, որով կջրենք մշակաբույսերն ու ծաղիկները, մեր լողավազաններից ու սեղաններից ջուրը չի պակասի:
Երեխաները հետևում էին Ջրանցույցի կառուցմանը, նայում էին, թե ինչպես է ամուր դրվում քարը քարին: Երեսուն ոտնաչափ բարձրություն ուներ, երկայնքի ամեն հաջորդ հարյուր յարդին խոշոր գարգոլներով ջրհորդաններ կային, որտեղից ջուրը բարակ հոսելով լցվելու էր այգու ջրավազանների մեջ:
Հյուսիսում ոչ թե մեկ երկիր էր, այլ երկու: Նրանք տարիներ շարունակ իրար վրա սուր էին ճոճում ու վահան վերցնում:
Ու հիմա՝ Ջրանցույցի կառուցման տարում, Հյուսիսի երկու երկրները միմյանց վրա միլիոնավոր նետեր էին արձակում ու միլիոնավոր վահաններ պարզում, որոնք առկայծում էին, ինչպես անհամար արևներ: Հեռավոր ափին մի օվկիանոս արցունք էր թափվել:

Տարեվերջին Ջրանցույցը կանգուն էր: Տաք Հարավում սպասող ժողովուրդը հարցնում էր.
– Ե՞րբ ենք ջուր ունենալու: Հյուսիսում պատերազմ է, մի՞թե պիտի ջրազուրկ մեռնենք, իսկ մեր բերքը չորանա:

Մի սուրհանդակ վազեվազ մոտեցավ.

– Սարսափելի պատերազմ է,- ասաց նա,- անասելի արյունահեղություն է: Ավելի քան հարյուր միլիոն մարդ է կոտորվել:
–Պատճառն ի՞նչ է:

–Էդ երկու երկրները համաձայնության չեն եկել:

–Մենակ էն ենք լսում, որ համաձայնության չեն գալիս: Մարդիկ հավաքվել էին քարե Ջրանցույցի ամբողջ երկայնքով: Սուրհանդակները հետ քաշվեցին փակ ջրարգելակներից: Դեղին դրոշակները ձեռքներին՝ գոչում էին.
– Սափորներ ու շշեր բերե՛ք, պատրաստե՛ք դաշտերն ու ակոսները, բացե՛ք լողավազանները, գնացե՛ք ջրամանների հետևից:
Հազարավոր մղոններ ձգվող Ջրանցույցը լցվում էր: Սուրհանդակները ոտաբոբիկ վազվզում էին ջրանցքների մեջ: Տասնյակ միլիոնավոր մարդ էր հավաքվել: Նրանք եկել էին կիզիչ ու շոգ գյուղերից: Մարդիկ աչքները ջուր կտրած կանգնել էին բաց ջրարգելակների առջև՝ ձեռքներին թակույկներ, սկահակներ, կուժեր, որ պարզել էին դեպի գարգոլներով ջրհորդանները, որտեղ սոսկ քամին էր սուլում:
– Գալի՛ս է,- լուրը հազար մղոն հեռավորության վրա մարդուց մարդ փոխանցվեց: Հեռու-հեռվից շառաչյուն լսվեց: Հեղուկը քարե ջրամբարի մեջ հոսում ու թափվում էր ցած: Սկզբում դանդաղ էր հոսում, հետո արագացավ, ապա կիզիչ արևի տակ առատորեն թափվեց Հարավի երկիր:

– Մոտ է: Շուտով կգա, լսե՛ք,- ձայնեց ժողովուրդը: Բաժակները վեր պարզեցին: Հեղուկը ջրարգելակներից դուրս թափվեց, լցվեց գարգոլների բերանները, այնուհետև հոսեց քարե լողավազանների, ջրամանների ու դաշտերի մեջ: Դաշտերը բերքառատ դարձան: Մարդիկ լողացան: Նրանց երգերի ձայնը դաշտից դաշտ, գյուղից գյուղ էր հասնում:

– Բայց, մայրի՛կ,- մի երեխա բարձրացրեց բաժակն ու շուռ տվեց: Հեղուկը դանդաղ ծորաց,- սա ջուր չէ:

– Սկվի՛ր,- կարգադրեց մայրը:

– Կարմիր է ու թանձր,- ասաց երեխան:

-Ձենդ կտրի՛ր: Վերցրու օճառն ու լվացվիր,- ասաց նա,- հարցեր մի՛ տուր, վազիր դաշտ, բացիր ջրարգելակն ու բրինձը ցանիր: Դաշտերից մեկում հայրն ու երկու որդիները, միմյանց դեմքերին նայելով, ծիծաղում էին:

– Եթե էսպես շարունակվի, անհոգ կապրենք: Սիլոսի պաշար, մաքուր մարմին, էլ ի՞նչ է պետք:

– Մի՛ անհանգստացիր,- խոսեցին երկու որդիները,- նախագահը Հյուսիս պատվիրակ է ուղարկել՝ վստահանալու, որ էդ երկու երկրները դեռ երկար համաձայնության չեն գա:

–Ով իմանա, միգուցե հիսունամյա պատերազմ լինի: Նրանք երգում ու ծիծաղում էին: Գիշերը բոլորը ուրախ քուն մտան՝ լսելով լի ու վարար Ջրանցույցի անուշ ձայնը, իսկ լուսադեմին հեղուկը գետի նման հոսում էր Հարավի երկիր:

Թարգմանությունը անգլերենից՝ Լիանա Հովհաննիսյանի